ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ h. 4 ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն

07. 08. 13թ. ք. Երևան

ՀՖՖ կարգապահական կոմիտեի 7 անդամներից նիստին ներկա էին 7-ը՝ Ռ. Սինոյանը, Ռ. Դալլաքյանը, Ա. Լոպոյանը, Կ. Նալբանդյանը, Բ. Ղալոյանը, Հ. Իգիթյանը, Ա. Հարությունյանը, հրավիրված՝ Արդար խաղի պաշտոնյայի տեղակալ Ա. Ազարյանը և Իրավաբանական բաժնի մասնագետ Լ. Մինասյանը:

Նիստը նախագահում էր ՀՖՖ կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանը:

Կոմիտեի նախագահը կոմիտեի անդամներին ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՖՖ մրցավարներ Անդրանիկ Արսենյանի, Հովհաննես Ավագյանի, «Շահումյան» ՖԱ ֆուտզալի թիմի ղեկավար Գրիգոր Հովասափյանի և նախկին ֆուտբոլիստ Էդգար Սաֆարյանի ցմահ ժամկետով որևէ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելքի հարցի քննարկում:

Հարցը ներկայացնելով՝ Արդար խաղի պաշտոնյայի տեղակալ Ա. Ազարյանը կոմիտեի անդամներին տեղեկացրեց, որ ս/թ հուլիսի 11-ին ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի լիգայի որակավորման առաջին փուլի Ինտեր Տուրկու /Ֆինլանդիա/ -Վիկինգուր/ Ֆարերյան կղզիներ/ հանդիպումը սպասարկած հայաստանյան մրցավարական անձնակազմի նկատմամբ ՈՒԵՖԱ ստացվել է բողոք Ինտեր Տուրկու ակումբի կողմից՝ կողմնակալ մրցավարության վերաբերյալ: Ի պատասխան ՈՒԵՖԱ հղած ՀՖՖ հարցմանը՝ ստացվել է ՈՒԵՖԱ-ի հետաքննությունների կորդինատոր Գրահամ Պիկերի նամակը, հանդիպումը սպասարկող մրցավարների տեսուչ՝ Սթիվ Բեննեթի զեկույցը և այդ հանդիպման վերաբերյալ Հայաստանից կատարված կասկածելի խաղադրույքներ կատարած անձանց ցուցակը, որից հետո բազմակողմանի և անկողմնակալ ուսումնասիրության են ենթարկվել ինչպես ՈՒԵՖԱ-ի, այնպես էլ ՀՖՖ և ՀՀ իրավապահ մարմինների կողմից: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում, ինչպես նաև գլխավոր մրցավար Անդրանիկ Արսենյանի և մրցավարի օգնական Հովհաննես Ավագյանի ինքնախոստովանական ցուցմունքներից պարզաբանվել է ոչ միայն խաղադրույքներ կատարելու նպատակով խաղի ելքի վրա ազդելու միտումնավոր գործողությունները, այլև այն, որ դրանց մեջ ուղղակի ներգրավված են եղել նաև «Շահումյան» ֆուտզալի թիմի ղեկավար Գրիգոր Հովասափյանը և «Արարատ» թիմի նախկին ֆուտբոլիստ Էդգար Սաֆարյանը:

Ելույթ ունեցավ Իրավաբանական բաժնի մասնագետ Լ Մինասյանը, ով ներկայացրեց քաղվածք ՀՖՖ գործկոմի 06.08.2013թ. թիվ 15 նիստի արձանագրությունից:

Քննարկումներից հետո քվեարկության արդյունքում կոմիտեն

կողմ – 7, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշեց

Հիմնվելով ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի 12-րդ հոդվածի 1-ին կետի1-ին և 3-րդ ենթակետերի վրա՝ ՀՖՖ մրցավարներ Անդրանիկ Արսենյանին, Հովհաննես Ավագյանին, «Շահումյան» ՖԱ ֆուտզալի թիմի ղեկավար Գրիգոր Հովասափյանին և նախկին ֆուտբոլիստ Էդգար Սաֆարյանին ցմահ ժամկետով արգելել որևէ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելուց և յուրաքանչյուրին տուգանել 5000000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամի չափով:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե որոշումը կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Նախագահ՝ Ռ. Սինոյան

Քարտուղար՝ Ա. Լոպոյան